

# ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ

## «ԳՈՐՇ ԳՈՒՅՆԵՐԸ»

DOI: 10.52174/2579-2989\_2023.2-55

**Հիմնաբառեր.** արդյունաբերության մրցունակություն, համաթիվ, տեխնոլոգիապարասպրանք, արդյունաբերական քաղաքականություն, արդյունաբերական արտադրանք

Տնտեսության մրցունակության առանցքում տարիներ շարունակ եղել և մնում է արդյունաբերության ոլորտի զարգացումը: Այս առումով, կարևոր նշանակություն ունեն արդյունաբերության մրցունակության գնահատումը և դրա հիմքում ընկած գործոնների համակողմանի վերլուծությունը:

Շողվածում կատարվել է Հայաստանի և ԵԱՏՄ երկրների արդյունաբերության մրցունակության և դրա առանցքային բաղադրիչների շարժընթացի համեմատական վերլուծություն: Արձանագրված արդյունքներն արտացոլում են արդյունաբերության ոլորտում առկա հիմնախնդիրները և արդյունաբերական քաղաքականության բացթողումները: Այս առումով, մեզ չի հաջողվել օգտագործել ԵԱՏՄ շրջանակներում ընձեռված տնտեսական հնարավորությունները տեխնոլոգիապարասպրանքների արտահանելի հատվածի ընդլայնման, արդյունաբերության մրցունակ կառուցվածքի ձևավորման և հայրենական արտանմանքների մրցունակության բարձրացման համար:

**Տ**նտեսության զարգացման կարևորագույն նախապայմանը, ինչպես նաև գլոբալ մարտահրավերներին դիմակայելու լավագույն միջոցը արդյունաբերության ոլորտի մրցունակության բարձրացումն է: Այս տեսանկյունից, կարևոր նշանակություն ունեն արդյունաբերական քաղաքականության մշակումն ու հետևողական իրագործումը, որի առանցքում արդյունաբերական ոլորտի մրցունակության համակողմանի գնահատումն է: Դա հնարավորություն է տալիս բացահայ-



### Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2011 թ. ավարտել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը և 2013 թ. ընդունվել ՀՊՏՀ ասպիրանտուրա: 2017 թ. պաշտպանել է թեկնածուական արեւնախոսությունը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական ասպիրանտ:


2015-2016 թթ. դասավանդել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում: 2016 թ. -ին աշխատանքի է անցել «Ամբերդ» հեղափոխական կենտրոնում: 2017 թ. -ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնում:

 ORCID <https://orcid.org/0000-0002-6883-455X>

տելու, թե որքանով է որոշակի երկրների հաջողվում արտադրել և վաճառել իրենց արդյունաբերական, հատկապես տեխնոլոգիատար ապրանքները ներքին և արտաքին շուկաներում: Արդյունաբերության ոլորտի մրցունակության գնահատումը միշտ տեղի է շարունակում է մնալ միջազգային տարբեր կառույցների ուշադրության կենտրոնում: Ստորև կատարել ենք Հայաստանի արդյունաբերության ոլորտի մրցունակության վերլուծություն՝ ըստ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության արդյունաբերության մրցունակության համաթվի (Competitive Industrial Performance Index (CIP)): Համեմատել ենք ԵԱՏՄ երկրների նույնանման ցուցանիշները, ինչը թույլ է տվել դիտարկել արդյունաբերության ոլորտի մրցունակության բարձրացումն ինտեգրացիոն հաղորդակցային հնարավորությունների խորացման համատեքստում:

Արդյունաբերության մրցունակության համաթիվը գնահատում է այդ ոլորտի մրցունակությունը երեք հիմնական հարթություններում՝ մշակող արդյունաբերական արտադրանք թողարկելու ու արտահանելու կարողություն, տեխնոլոգիական խորություն ու արդիականացում, համաշխարհային արդյունաբերական արտադրանքի վրա ունեցած ազդեցություն: Համաթիվը հիմնվում է մշակող արդյունաբերության զարգացման վրա և հաշվի առնում դրա ազդեցությունը ՀՆԱ իրական աճի գնահատումներում՝ անտեսելով հանքահումքային ապրանքների և վերամշակման ցածր մակարդակ ունեցող ապրանքների արտադրությունը<sup>1</sup>:


«Արդյունաբերության մրցունակության համաթիվ-2022» վարկանշում Հայաստանը զբաղեցրել է 98-րդ տեղը և հայտնվել միջինից ցածր արդյունք արձանագրած երկրների խմբում: Համեմատության համար նշենք, որ ԵԱՏՄ երկրներից Ղազախստանը և Բելառուսը զբաղեցրել են համապատասխանաբար՝ 63-րդ և 46-րդ տեղերը ու ընդգրկվել միջին ու միջինից բարձր արդյունք արձանագրած երկրների խմբում: ԵԱՏՄ երկրների ցանկում առաջատարը Ռուսաստանն է, որը 154 երկրների ցանկում զբաղեցրել է 35-րդ տեղը և ներառվել միջինից բարձր արդյունք արձանագրած երկրների խմբում<sup>2</sup>: Այս տեսանկյունից, ԵԱՏՄ երկրների բարենպաստ դիրքը և ինտեգրացիոն շրջանակներում տնտեսական հնարավորությունների խորացումը նպաստավոր պայմաններ պետք է ստեղծեն Հայաստանի մշակող արդյունաբերության ոլորտի և



ԳԾԱԴԱՏԿԵՐ 1

**Արդյունաբերության մրցունակության համաթիվը, 1991-2020 թթ.<sup>3</sup>**

<sup>1</sup> Ավելի մանրամասն տե՛ս United Nations Industrial Development Organization, Competitive Industrial Performance Report 2020, page 15:  
<sup>2</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (United Nations Industrial Development Organization) տվյալների բազա, <https://stat.unido.org/database/CIP%20-%20Competitive%20Industrial%20Performance%20Index>  
<sup>3</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (United Nations Industrial Development Organization) տվյալների բազա, <https://stat.unido.org/database/CIP%20-%20Competitive%20Industrial%20Performance%20Index>



■ Բնակչության մեկ շնչի հաշվով մշակող արդյունաբերական արտադրանքի ավելացված արժեքը, ԱՄՆ դոլար  
 ■ Բնակչության մեկ շնչի հաշվով մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանումը, ԱՄՆ դոլար

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

**Բնակչության մեկ շնչի հաշվով մշակող արդյունաբերական արտադրանքի ավելացված արժեքը և արտահանումը, ԱՄՆ դոլար, 1991-2020 թթ.<sup>4</sup>**

հատկապես տեխնոլոգիատար ապրանքների արտադրության առաջխաղացման համար: Սակայն, համաթվի շարժընթացի ուսումնասիրությունից կարելի է նկատել, որ Հայաստանում վերջին երկու տասնամյակում, այդ թվում՝ ԵԱՏՄ անդամակցությունից հետո նկատելի որակական տեղաշարժեր չեն գրանցվել:

Պատկերն առավել ակնհայտ է դառնում համաթվի բաղադրիչների շարժընթացի ուսումնասիրությունից: Այսպես՝ վերամշակվող արտադրանք թողարկելու և

արտահանելու կարողության ենթահամաթվի շարժընթացի ուսումնասիրությունից կարելի է ենթադրել, որ արդյունաբերության ոլորտում ձեռնարկված միջոցառումները բավարար չեն եղել ցանկալի արդյունքի ապահովման տեսանկյունից: Այսպես՝ 2021 թվականին բնակչության մեկ շնչի հաշվով մշակող արդյունաբերական ավելացված արժեքի ցուցանիշը Հայաստանի համար կազմել է 504,34 ԱՄՆ դոլար<sup>5</sup>, որը մոտ երեք անգամ ցածր է Բելառուսի ցուցանիշից: Նմանատիպ պատկեր

ԱՐՅՈՒՍԱԿ 1


**Արդյունաբերության տեխնոլոգիական խորության և արդիականացման ենթահամաթվի ցուցիչներն ըստ «Արդյունաբերության մրցունակության համաթիվ-2022»-ի<sup>6</sup>**

	Մշակող արդյունաբերական արտադրանքի մասնաբաժինն ավելացված արժեքի մեջ	Միջին ու բարձր տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժինն ավելացված արժեքի մեջ	Մշակող արդյունաբերության արտադրանքի մասնաբաժինն արտահանման մեջ	Միջին և բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման մասնաբաժինը
Ռուսաստան	0.36	0.31	0.43	0.35
Բելառուս	0.61	0.50	0.82	0.54
Ղազախստան	0.30	0.20	0.29	0.47
Ղրղզստան	0.41	0.02	0.33	0.25
Հայաստան	0.31	0.10	0.74	0.15

<sup>4</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (United Nations Industrial Development Organization) տվյալների բազա, <https://stat.unido.org/database/CIP%20-%20Competitive%20Industrial%20Performance%20Index>

<sup>5</sup> Աղբյուրը՝ United Nations Industrial Development Organization, <https://stat.unido.org/country-profile>

<sup>6</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (United Nations Industrial Development Organization) տվյալների բազա, <https://stat.unido.org/database/CIP%20-%20Competitive%20Industrial%20Performance%20Index>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

**Արդյունաբերականացման արդյունավետության ցուցիչը, 1991-2020 թթ.<sup>7</sup>**

է նաև մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման ցուցանիշի դեպքում, որով Բելառուսն ավելի քան չորս անգամ է գերազանցում Հայաստանի<sup>8</sup> նույնանման ցուցանիշը<sup>9</sup>:

Ուշագրավ է, որ եթե մինչև 2015 թվականը (բացառությամբ 2008 թվականի) բնակչության մեկ շնչի հաշվով մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանումը գերազանցել է բնակչության մեկ շնչի հաշվով մշակող արդյունաբերական ավելացված արժեքի ցուցանիշը, ապա, 2016 թվականից սկսած, հակառակ միտումն է արձանագրվել:


Ինչ վերաբերում է արդյունաբերության տեխնոլոգիական խորության և արդիականացման ենթահամաթվին, ապա այն դիտարկում է երկրի՝ բարձր տեխնոլոգիատար ապրանքներ արտադրելու կարողությունը: Ենթահամաթիվը բաղկացած է արդյունաբերականացման արդյունավետության ցուցիչից (միջին և բարձր տեխնոլոգիական ապրանքների ավելացված արժեքի մասնաբաժինը մշակող արդյունաբերության ավելացված արժեքում, մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում) և արդյունաբերական (մշակող) արտադրանքի արտահանման

որակի ցուցիչից (միջին և բարձր տեխնոլոգիական մասնաբաժինը մշակող արդյունաբերության մեջ, մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման մեջ):

Հարկ է նշել, որ արդյունաբերության տեխնոլոգիական խորության և արդիականացման ենթահամաթվի ցուցանիշներով ԵԱՏՄ երկրների ցանկում առաջատարը Բելառուսն է, որն աչքի է ընկնում տեխնոլոգիատար ապրանքների արտադրության և արտահանման բարձր տեսակարար կշռով: Հետևապես՝ Հայաստանի համար առանցքային նշանակություն ունի Բելառուսի հետ տնտեսական հարաբերությունների հետագա խորացումը տեխնոլոգիատար ապրանքների արտադրության և արտահանման մասով, որը կնպաստի այս ուղղությամբ արդյունաբերական ներուժի իրացմանը:

Արդյունաբերության տեխնոլոգիական խորության և արդիականացման ենթահամաթվի ցուցանիշներում խտացված է Հայաստանի մշակող արդյունաբերության ոլորտի «մռայլ» պատկերը: Այն արտացոլում է արտադրության ոլորտի կառուցվածքային հիմնախնդիրները, որոնք վկայում են տնտեսության խոցելիության և

<sup>7</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (United Nations Industrial Development Organization) տվյալների բազա, <https://stat.unido.org/database/CIP%20-%20Competitive%20Industrial%20Performance%20Index>  
<sup>8</sup> 2020 թվականին բնակչության մեկ շնչի հաշվով մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանումը Հայաստանի համար կազմել է 584,8 ԱՄՆ դոլար:  
<sup>9</sup> Ավելի մանրամասն տե՛ս United Nations Industrial Development Organization, Armenia, Country and Economy Profiles, <https://stat.unido.org/country/ARM.pdf;jsessionid=6B1038B4FBB8E45EA3530035B4125D4A>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4


**Մշակող արդյունաբերական և միջին ու բարձր տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժինն ավելացված արժեքի մեջ, տոկոս, 1991-2020 թթ.<sup>10</sup>**

տեխնոլոգիատար արտադրանք թողարկելու ու արտահանելու սահմանափակ կարողությունների մասին:

Այսպես՝ 2021 թվականին մշակող արդյունաբերությանը բաժին է ընկնում արդյունաբերական արտադրանքի 63,1 տոկոսը, որը նվազագույնն է վերջին հինգ տարում<sup>11</sup>: Վերջին երկու տասնամյակում չնչին փոփոխություններ են արձանագրվել այնպիսի կարևորագույն ցուցանիշների մասով, ինչպիսիք են ՀՆԱ-ում մշակող արդյունաբերության մասնաբաժինը, արտա-

հանման մեջ մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը, ինչպես նաև մշակող արդյունաբերության ավելացված արժեքի մեջ միջին և բարձր տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժինը:

Խնդրահարույց է նաև մշակող արդյունաբերության կառուցվածքը: Այսպես՝ մշակող արդյունաբերության կեսն ապահովում է սննդի և խմիչքի արդյունաբերությունը, մինչդեռ, օրինակ, համակարգիչների, էլեկտրոնային, օպտիկական, էլեկտրական սարքավորումների, մեքենաների և



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

**Արտահանման մեջ մշակող արդյունաբերական և միջին ու բարձր տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժնի ցուցիչները, 1991-2020 թթ.<sup>12</sup>**

<sup>10</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (United Nations Industrial Development Organization) տվյալների բազա, <https://stat.unido.org/database/CIP%20-%20Competitive%20Industrial%20Performance%20Index>

<sup>11</sup> Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, էջ 309, <https://armstat.am/file/doc/99533583.pdf>

<sup>12</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (United Nations Industrial Development Organization) տվյալների բազա, <https://stat.unido.org/database/CIP%20-%20Competitive%20Industrial%20Performance%20Index>

սարքավորանքի արտադրությունը միասին չեն գերազանցում 3 տոկոսը<sup>13</sup>:

Չափազանց բացասական երևույթ է միջին և բարձր տեխնոլոգիական ապրանքների անհամեմատ փոքր տեսակարար կշիռն ինչպես մշակող արդյունաբերության ավելացված արժեքում, այնպես էլ արտահանելի մշակող արդյունաբերական արտադրանքի մեջ: Մինչդեռ վերջին երկու տասնամյակում արտահանման մեջ մշակող արդյունաբերության տեսակարար կշիռն և միջին ու բարձր տեխնոլոգիական ապրանքների մասնաբաժնի գնահատականների միջև «ճեղքվածն» անընդհատ կերպով աճում է: Սա վկայում է արդյունաբերական արտադրանքի ցածր տեխնոլոգիատարության և արդյունաբերության ոչ մրցունակ կառուցվածքի մասին:

Արտահանվող ապրանքատեսականուսահմանափակության և ցածր տեխնոլոգիատարության հիմնախնդիրներն արտացոլվում են նաև արդյունաբերական (մշակող) արտադրանքի արտահանման որակի ցուցիչի շարժընթացում: Վերջին տասնամյակում այս գնահատականը փոփոխվել է ընդամենը 0,1 միավորով՝ 2011 թվականի 0,65-ից 2020 թվականին դառնալով 0,74: Սա վկայում է համաշխարհային շուկային Հայաստանի ինտեգրման համեմատաբար «ցածր որակի» մասին<sup>14</sup>:

Հետևապես՝ ավելորդ է անգամ խոսել համաշխարհային արդյունաբերական արտադրանքի վրա Հայաստանի ազդեցության մասին: Այս առումով, ձեռնարկված միջոցառումների շրջանակներում Հայաստանին չի հաջողվել բարելավել երկրի մրցակցային դիրքը համաշխարհային շուկայում: Հատկանշական է, որ համաշխարհային արդյունաբերական արտադրանքի վրա ունեցած ազդեցության ենթահամաթվով դրական տեղաշարժեր չեն արձանագրվել նաև ԵԱՏՄ անդամակցությունից հետո, որը վկայում է չիրացված տնտեսական հնարավորությունների և չօգտագործված ինտեգրացիոն կապուլիների մասին:

Այսպիսով՝ արդյունաբերության մրցունակության համաթիվը կարելի է համարել

յուրահատուկ ազդակ արդյունաբերության ոլորտի մրցունակությունը գնահատելիս, և այս վարկանշում Հայաստանի դիրքի բարելավումը կարևոր նշանակություն ունի ոլորտի մրցունակության բարձրացման համար: Ավելին, այն հնարավորություն է տալիս բացահայտելու արդյունաբերության ոլորտում առկա «խորշերն» ու վեր հանելու արդյունաբերական քաղաքականության մշակման և գործնականում դրա իրագործման բացթողումները:

Ընդհանուր առմամբ, արդյունաբերության մրցունակության համաթիվի շարժընթացի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ համապատասխան ոլորտում նշանակալի որակական տեղաշարժեր չեն արձանագրվել: Հարկ է նշել, որ առանձին ապրանքատեսակների մասով արտահանման ֆիզիկական ծավալների աճ գրանցվել է հատկապես ԵԱՏՄ անդամակցությունից հետո, սակայն դա որակական բնույթ չի կրել: Հայաստանին դեռևս չի հաջողվել թևակոխել զարգացման որակապես նոր մակարդակ, որի առանցքում արդյունաբերության մրցունակ կառուցվածքն է: Արդյունաբերական քաղաքականության մշակման ու հետևողական իրականացման բացերը թույլ չեն տվել հաջողության հասնել արդյունաբերության ոլորտի, ինչպես նաև արտահանման արդյունավետ կառուցվածքի ձևավորման գործում: Այս տեսանկյունից, օրակարգային է դառնում գործնականում արդյունաբերության կենսունակ քաղաքականության իրականացումը, որի դիտակետում տեխնոլոգիատար ապրանքների արտադրության և տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնման հնարավորություններն են: Թվում էր՝ ԵԱՏՄ շրջանակներում ստեղծված տնտեսական հնարավորությունների խորացումը հեռանկարում պետք է նպաստեր տեխնոլոգիատար ապրանքների մրցունակության բարձրացմանը և արտահանման ընդլայնմանը՝ հաշվի առնելով ԵԱՏՄ երկրների բարենպաստ դիրքն ըստ արդյունաբերության մրցունակության համաթվի: Ցավոք, մեզ չի հաջող-

<sup>13</sup> Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2022, էջ 311, <https://armstat.am/file/doc/99533583.pdf>

<sup>14</sup> Ավելի մանրամասն տեսն United Nations Industrial Development Organization, Competitive Industrial Performance Report 2020, pages 16-17:

վել ինտեգրացիոն կապուղիներն առավելազույն օգտագործել՝ հօգուտ մեր երկրի արդյունաբերական ներուժի յուրացման,

որի դեպքում հասանելի կլինեն արդյունաբերության ոլորտի զարգացման որակապես նոր մակարդակ:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2022, <https://armstat.am/file/doc/99533583.pdf>
2. ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (United Nations Industrial Development Organization) տվյալների բազա, <https://stat.unido.org/database/CIP%20-%20Competitive%20Industrial%20Performance%20Index>
3. ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն (United Nations Industrial Development Organization) United Nations Industrial Development Organization, Competitive Industrial Performance Report 2020.
4. United Nations Industrial Development Organization, Armenia, Country and Economy Profiles, <https://stat.unido.org/country/ARM.pdf;jsessionid=6B1038B4FBB8E45EA3530035B4125D4A>
5. United Nations Industrial Development Organization, <https://stat.unido.org/country-profile>

**Ани ХАЧАТРЯН**

*Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук*

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

### «СЕРЫЕ ЦВЕТА» ПРОМЫШЛЕННОСТИ РА

Развитие промышленного сектора было и остается основой конкурентоспособности экономики на протяжении многих лет. В связи с этим большое значение сыграла оценка конкурентоспособности отрасли и комплексный анализ факторов, лежащих в ее основе.

В статье проведен сравнительный анализ промышленной конкурентоспособности Армении и стран ЕАЭС, анализ динамики ее ключевых составляющих. Полученные результаты выявили проблемы отрасли и пробелы в промышленной политике. В связи с этим, нам не удалось использовать экономические возможности, предоставляемые в рамках образовавшихся отношений со странами ЕАЭС, что могло служить фактором расширения экспортного сектора технологичных товаров, формирования конкурентоспособной структуры отрасли и повышения конкурентоспособности отечественной продукции.

**Ключевые слова:** конкурентоспособность отрасли, количество, технологический продукт, промышленная политика, промышленный продукт

**Ani KHACHATRYAN**

*Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE, PhD in Economics*

MARKETS AND COMPETITION

### «GRAY COLORS» OF THE INDUSTRY IN THE RA

The development of the industrial sector has been and remains the cornerstone of economic competitiveness for many years. Therefore, it is vital to assess the industry's competitiveness and comprehensively analyze the factors that influence it. In this paper, we have conducted a comparative analysis of industry competitiveness in the Republic of Armenia and the countries of the EAEU, focusing on its key components. The results reveal issues within the industry and highlight gaps in industrial policy. Specifically, we have not managed to use the economic opportunities provided by the EAEU framework for expanding the export of technological goods, fostering a competitive industry structure and enhancing the competitiveness of domestic products.

**Key words:** competitiveness of the industry, index, technological product, industrial policy, industrial product